

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ Դ Ի Տ Կ Ս Տ Տ Ի ՈՒ

ՄՈՎԱՅՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԶՈՐՐՈՐԴ ԳՐՔԻ ՀԱՐՑԸ

Ա. Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ա. «Խորուստ՝ Բազմադետ, գյուտ՝ բազմատենչալի»

Մովսես Խորենացու «Հայոց Մեծաց Պատմության» շորորդ գրքի հարցը Ղևոնդ Ալիշանը առաջ է քաշել դեռևս 1851 թ., «Յաղագս Մովսիսի Խորենացույ Դ անուանեալ գրոյն պատմութեան» հոդվածում, «բազմադետ կորրուստի» մեծ ափսոսանքով և «բազմատենչալի գյուտի» ոգևորիչ սպասումով: «Ոչ ինչ պատուականագոյն ի թանգարանս դպրութեան մերոց հայրենեաց քան զՊատմութիւն Հայոց Մովսիսի Խորենացույ, և ոչ կորուստ բազմադետ կամ գիւտ բազմատենչալի, քան զԴ նորա անուանեալ գրոց... Երջանիկ և բարենշան գրէի զօրն՝ յորում յայտնէին երկինք զծածկեալն ի հազարամեայ հնութենէ, և ոչ իսպառ ի դառն և յամուլ ժամանակի համարէի զիս ձգել կեանս, նաև պարծանս արդեօք զկենալն իմ այնպիսեալ ցանկալի գիւտիւ»¹:

Հոդվածում հեղինակը քննում է երեք հարց. Որտեղի՞ց ենք տեղեկություն իմանում Խորենացու Պատմության շորորդ գրքի մասին, ի՞նչ է նրա բովանդակությունը, և որևէ բան նրանից հասնո՞ւ է մեզ, թե ոչ:

Տեղեկության աղբյուրը Թովմա Արծրունին է, նրա երկից բերված են հետևյալ վկայությունները. «Ի Դ դպրութեան Մովսէսի», «Որպէս աւանդեցաւ այս ի Դ դրուագի խոստաբանեալ Պատմութեան Մովսէսի Խորենացույ՝ վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածոյն», և դարձյալ՝ «Որպէս ընթեռնումք ի բանիբուն գրակարգութեան Մովսիսի տիեզերահռչակեալ վարդապետի և քերթողի, և մերոց լուսաւորութեան հաստատագոյն յօրինողի, որպէս պատմէ ի գլուխս երկրորդի. Պատմութեան»²:

Ալիշանը Թովմա Արծրունու սույն վկայությունը համարում է Խորենացու խոստաբանության արդարացում: Պատմահայրը մարդկության արմատի մասին խոսելիս խոստանում է. «Արդ օրէն էր մեզ աստանօր զկարծիս նոցա (հին մատենագիրների — Ա. Մ.) յայտնել ըստ կարողութեան, թէ զի՞նչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ խորհեցան այսպէս զայսոսիկ դրել, այլ վասն երկարութեան առաջիկայ գործոյս այլում տեղւոյ և ժամանակի զայսոսիկ թողեալ, հատցուք աստանօր զբանս»³:

Թովմա Արծրունին Խորենացու նշված երկը գիրք չի անվանում, այլ «դրուագ և վերադարձութիւն ի վերայ երեցս կամ երրորդի հատուածեալ դրուագին»: Նրան է նաև «դպրութիւն» անվանումը: «Բայց վերադարձութիւնը թուի ինձ, — շարունակում է Ալիշանը, — թէ օրինակագիրն ինքնին եղ այնմ գրոց, որ և առաջնոցն յանկագոյնս պատշաճեցոյց մակադրականս, զոմն Ծննդաբանութիւն անուանեալ Հայոց Մեծաց, զոմն Միջակ Պատմու-

1 «Բազմավեպ», Վենետիկ, 1851, էջ 69:

2 Նույն տեղում, էջ 61—70: Ղ. Ալիշանը նկատում է. «Թուի և Ասողկայ և Սամուէլի Անեցուն ակնարկել ի սոյն, այլ ոչ յայտնի իբր զԹովմայիս, և զի սորա սակաւագիւտ եմ Պատմագրութեան, և այն ոչ ուրեք անթերի երևեալ, որպէս կարծեմ»:

3 Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց. Երևան, 1981, էջ 16:

թիւն Հայոց Մեծաց, և զոմն Աւարտարանութիւն Հայոց Մեծաց կամ Մերոց Հայրենեաց»⁴:

Բովանդակության մասին գրում է, որ այն բուն Պատմության նման միատարր չէր, այլ մի սասր վերադարձություն (այսինքն հավելած) էր ամբողջ Հայոց Պատմության երեք գրքերին, երկրորդ մասը 440—465 թթ. կամ մինչև Ջենոն կայսրը ընկած ժամանակահատվածի պատմության շարաշրջանությունն էր և երրորդը՝ ժամանակագրություն էր, և պատճառաբանում է յուրաքանչյուրի առկայության անհրաժեշտությունը:

Վերջապէս, առաջարկում է պատմագրական որոշ միավորներ: Դրանցից մեկը՝ «Յաղագս մահուան Տրդատայ թագաւորի հզօրի, քաջի և առաքինոյ», բաղկացած մի ճառընտրից, հրատարակում է հետևյալ խորագրի տակ. «Ի վերադարձութեանց Պատմութեանն Հայոց Մովսիսի Խորենեցոյ». այսպիսի պատճառաբանությամբ. «Եւ զայս ոչ միայն ոճ շարագրութեանն հաստատմացունէ Խորենեցոյն լինել, այլև Թովմա հաստատէ հետախոյզ Արծրունին անսուտ վկայութեամբն»⁵ և բերում է համապատասխան վկայությունը: Ալիշանը հորվածն ավարտում է այսպէս. «Մաղթեմ հսկողաց դիւանացն հետամուտ լինել այսպիսում մեծապանծ գիւտի և երախտապարտ ընդ իս կացուցանել զհամօրէն տունն Հայկայ»⁷:

Խորեն Ստեփանեն Մովսես Խորենացու Հայոց Պատմության աշխարհաբար թարգմանության մեջ ծանոթագրելով «այլում տեղոյ և ժամանակի զայսուսիկ թողցուք» խոսքը, գրում է, որ այն «մի հիմք են համարում ոմանք Մ. Խորենացու Պատմութեան Դ գրքի գոյության: Մենք համաձայն չենք»: Սակայն գրքի վերջում բերում է Տրդատ թագաւորի մասին հատվածը՝ աշխարհաբար⁸:

Գ. Տեր-Մկրտչյանը 1891 թ. հրատարակած «Խորենացու Պատմութեան ուսումնասիրությունը» աշխատության մեջ նշելով, որ Մ. էմինը պաշտպանում է Դ զրվագի գոյությունը, Կարենյանցը գտնում է, որ Խորենացու թշնամիները կարող է այն հրկիզած լինեն, Խորեն Ստեփանեն և Լանգլուան շորորդ գիրքը Խորենացու աշակերտների գրած են համարում, ավելացնում է, «որ այս հարցով զբաղվող բոլոր բանասերներն էլ մոռացել են ամենադրական և ծանրակշիռ փաստը, որի շորորդով կարելի էր կասկածանքով վերաբերվել Թովմա Արծրունու տված տեղեկությանը: Այդ այն է, որ Խորենացուց օգտվելով բոլոր պատմաբանները՝ Սեբեոս, Հովհաննես կաթողիկոս, նույնիսկ ինքը՝ Թովման, որոնք շատ տեղեր գրեթե բառ առ բառ ընդօրինակել են Խորենացու Պատմությունը, չունեն մի այնպիսի նոր բան, որ չգտնվեւ մեր այժմյան ունեցած Խորենացու երեք հատուկներում: Ուրեմն Դ գիրքը չէր պարունակում ոչինչ նոր ... այլայպես ասած՝ չկար Դ գիրքը»⁹:

Անշուշտ, հեղինակը քննել է վկայակոչած մատենագիրների երկերը և եկել սույն համոզման: Սակայն, ինչպես կտեսնենք, և իրեն՝ Թովմայի, և

⁴ Դ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 70:

⁵ Նույն տեղում, էջ 74—75:

⁶ Թովմա Արծրունի և Անանուն. Պատմութիւն տանն Արծրունեաց. Երևան, 1985, էջ 96:

⁷ Նույն տեղում, էջ 75: Ալիշանը սույն հորվածում գրում է, որ մինչև Թովմա Արծրունին, որը Նվսերիոս Կեսարացու, Ափրիկանեցու և Աղիկանացու հետ հավասար ժամանակագրական վկայությունները հաստատում է Մովսես Խորենացու շորորդ գրքով: Անանիա Շիրակացին, որ ժամանակագրության հեղինակ է կարծում, ասել, յանդրէասայ և ի Մովսիսէ Խորենացոյ առեալ զթիւս ժամանակացն» (էջ 71): Հեղինակը նկատի ունի VII դարի մի ժամանակագրություն, որ հրատարակել է Բ. Սարգիսյանը 1904 թ.:

⁸ Մովսես Խորենացի. Հայոց պատմութիւն. Պետերբուրգ, 1897, էջ 497, 503—505:

⁹ Գ. Տեր-Մկրտչյան. Հայագիտական ուսումնասիրություններ. 4. Ա, Երևան, 1979, էջ 43:

վկայակոչված մյուս հեղինակների մոտ այդ հետքերը կան: Այնուհետև նա հանդիմանում է նախորդ ուսումնասիրողներին, որոնք առհասարակ մոռացել են քննության հեթարկել իրենց խուզարկությունների բուն պատճառ թուվմայի խոսքերը, որ ամեն մի վարկածի միակ աղբյուրն է: «Թուվմայի ասածին վերաբերվել են բոլորովին ոչ թուվմայորեն, այլ կատարյալ հավատով: Մինչդեռ, չէ՞ որ թուվմա Արծրունու այդ մի շորորոդ խոսքը կարող է սխալ լինել կամ աղճատված: Եվ պետք չէ մոռանալ, որ այդ միակ «շորորոդն» է մեր ամբողջ դրականության մեջ՝ հորենացու «շորորոդ» գրքի գոյությունը վկայող»¹⁰:

Այստեղ էլ նկատենք, որ «շորորոդ» խոսքից բացի, հենց նույն քաղվածքում, ուրիշ խոսք կա շորորոդ գրքի գոյությունը վկայող: Այդ «Վերադարձութիւն ի վերայ երեցունց դրուագեալ հատուածոյն» նախադասության մեջ «երեցունց» խոսքն է, որ կարդում ենք Ղ. Ալիշանի բերած բաղվածքում, որպես «երիցս կամ երրորդի հատուածեալ դրուագին»¹¹:

Նախնական դիտողություններից հետո Գ. Տեր-Մկրտչյանը անցնում է ուղղակի թուվմայի հատվածի քննությանը: «Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշագան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչև ի կայսր Զենոն, որոյ ժամանակ կենացն տեւալ ձգեալ ամս ճի՛ (հարյուր քսան), զի և պարարտ ծերութեամբ, որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի շորորոդ դրուագի խոստարանեալ պատմութեանն Մովսէսի հոտրենացւոյ, վերադարձութեան ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին, զոր և երանելին Կորին, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրոպայ՝ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ»¹²:

Գ. Տեր-Մկրտչյանը նախ քննում է «դրուագ» բառը, այն դիտում է իբրև «գլուխ» և նույնացնելով հորենացու Հայոց պատմության առաջին գրքի Դ գլխի հետ, քիչ թե շատ համապատասխան բան է համարում նրա խոստումը՝ «այլում տեղւոյ և ժամանակի զայսոսիկ թողեալ, հտտուացուօ աստանօր զբանս» և համոզվում է, որ նրա բովանդակությունը չի համապատասխանում թուվմա Արծրունու նշած նյութին: Այս դրվագը որպես «գիրք» է դիտում և դարձյալ չի ընդունում, քանի որ գիրքը չկա և այն միայն Արծրունին է հիշում, և «այս բոլոր խուզարկությունների և ենթադրությունների պատճառը միակ «շորորոդ» բառն է, ուրեմն և ինչ կլինի, եթև այդ շորորոդ բառը սխալ լինի և կամ աղավաղված»: Նշելով, որ ձեռագրերի մեջ թվերի շփոթը հաճախ է կատարվում, մանավանդ «Գ» և «Դ» տառերի, «ուստի և սկզբնականը ամենայն դուրսիցս կարող է լինել գիւմ և ոչ թե դա, «որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի Գ (այն է երրորդ) դրուագի խոստարանեալ պատմութեանն Մովսէսի հորենացւոյ...: Այս ենթադրության ամենադրական ապացույցը, — շարունակում է հեղինակը, — գտնվում է յուր կողքին անմիջապէս, որի վրա և, շատ զարմանալի բան, ոչ ոք ուշադրություն չի դարձրել»¹³: Ահա այն. — «Վերադարձութիւն ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին... Այսինքն՝ երրորդ դրվագում, որը վերադարձութիւն էր երկու դրուագեալ հատվածների վրա: Կամ երրորդ դրվագում, որը դրվեց երկրորդ դրվագից հետո: Ուրեմն և Մովսէսի Պատմությունն ունի առաջին, երկրորդ և երրորդ դրվագ կամ գիրք, բայց ոչ բնավ շորորոդ... երկեցունցը ամենադրական ապացույցն է, որ պետք է սկզբնագրում լինի անպատճառ գիւմ, որ հետո, շատ սովորական սխալմամբ, կարդացվել է

¹⁰ Նույն տեղում, էջ 45:

¹¹ «Բաղվածիկ», էջ 70:

¹² Թուվմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն տանն Արծրունեաց. Ս. Պետերբուրգ, 1897, էջ 72—76: Հմմտ. նույնը, Երևան, 1985, էջ 122:

¹³ Գ. Տեր-Մկրտչյան. Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 47—48:

դառնալով: «Այսպիսով ուրեմն,— եզրակացնում է Գ. Տեր-Մկրտչյանը,— Թուվմա Արծրունին, ինքն էլ երբեք չէ տեսել որևէ շորորոգ գիրք և ոչ էլ այդ մասին որևէ գաղափար ունեցել: Անուշադիր գրողի մի փոքրիկ սխալը դարձել է ահագին շփոթության պատճառ»¹⁴:

Մեր կարծիքով, այս վճռական եզրակացության հիմքը շատ խախուտ ենթադրություն է: Գ և Դ գրերի շփոթ, իհարկե, հաճախ կարող է լինել: Դրա համար պետք է հավատացած լինել, որ հեղինակը թվերը ոչ թե բառերով «երեք» և «չորեք» է գրել, այլ՝ տառերով Գ և Դ:

Թուվմայի ձեռագրում այդ թվերը գրված են բառերով, որովհետև շփոթելու մասին և՛ հեղինակները, և՛ գրիչները ավելի լավ գիտեին, քանի որ ամեն օր գրչության հետ գործ ունեին: Ուստի նրանք զգուշանում էին այդ կարգի թվերը տառերով գրելուց: Գ. Տեր-Մկրտչյանը ինքն էլ գիտեր իր պատճառաբանության հիմքերի թուլությունը: Նա գրում է. «Բայց կարող են մեղ հատուցել մեր դրամով, ընդունելով հանդերձ, որ երկու թվերից միին՝ կամ «չորորոր» և կամ «երկեցունցը» սխալ է, և որ այդ սխալը «երկեցունց» բառի մեջ է և ոչ թե «չորորոր»: Եվ իսկապես, եթե այժմյան «երկեցունցի» փոխանակ լիներ «երեցունց» այն ժամանակ ոչ միայն մեր հաստատության գլխավոր հիմքը կկործանվեր, այլև՝ «չորորոր» համար կգտնվեր մի նոր և առավել զորավոր փաստ: Բայց «երեցունց» չկա»¹⁵:

Ի հիասթափություն բազմավաստակ գիտնականի «եքեցունց» կա: Այն Թուվմա Արծրունու 1303 թ. Աղթամարում արտագրված ձեռագրում է. և տպագրված Ղ. Ալիշանի հոգովածում ու նոր Հայկազեան բառգրքում, որն, իսկապես, ոչ միայն խնամքով «հորինած» հաստատության գլխավոր հիմքը կործանում է, այլև «չորորոր» համար դառնում է մի նոր և ավելի զորավոր փաստ: Այստեղ մեղքի մեծ մասն ընկնում է հրատարակիչների վրա: «Թուվմա Արծրունու առաջին հրատարակության մեջ «երկեցունց» է (Կ. Պոլիս, 1852, էջ 82),— գրում է Գ. Տեր-Մկրտչյանը,— «երկեցունց» է նաև երկրորդ տպագրության մեջ (Ս. Պետերբուրգ, 1887, էջ 76), որին խնամքով հսկել է Քերովբե Պատկանյանը՝ բաղդատելով նորից հնագույն ձեռագիրը (գրված՝ Աղթամարում, 908 թվին) երկու նորագույն ձեռագրերի հետ և էջի ներքևում նշանակելով տարբեր ընթերցվածները: Եղած բոլոր հրատարակությունները այս երկու տպագրությունն են, ուստի և այդ հրատարակություններից եղած բոլոր քաղվածքներում էլ «երկեցունց» է, ինչպես նաև Բրոսսի ֆրանսերեն թարգմանության մեջ»¹⁶:

Թուվմա Արծրունու Պատմության այս ձեռագիրը, որից կատարվել են վերոհիշյալ տպագրությունները, այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, որի մեջ «երեցունց» է. ուստի «երկեցունցը» հրատարակիչների ոչ թե մեղքով, այլ գիտությամբ է արված, հակառակ հեղինակի և գրիչների ավանդական հավատարմության: Ուստի Գ. Տեր-Մկրտչյանի վերջնական եզրակացությունը, թե՛ «Արծրունու «չորորոր» ու «երկեցունցը» հակասական են, և կարող է գտնվել մի նոր ձեռագիր, որի գրիչը, նկատած լինելով այդ հակասությունը՝ սրբագրած լինի զրան՝ «երկեցունցը», «երեցունցի» փոխելով: Ուրեմն այդ ենթադրական դեպքում էլ, մենք նախապատվությունը պետք է տանք «երկեցունց» ընթերցվածին»¹⁷, ճիշտ չէ:

Գ. Տեր-Մկրտչյանը Խորենացու 120 տարի ապրելու հարցը համարում է մի բարեպաշտական տուրք՝ վճարված երկու պատկառելի ժերունիներին (Սահակ Պարթևին և Մովսես Խորենացուն—Ա. Մ.), մի ավանդություն ըստ եղծված դարեր անցնելուց հետո: Խորենացու Պատմության սահմանների մասին սակսեալ յԱղամայ մինչև ի կայսր Զենոն» վկայությունը չի հա-

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, էջ 49:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 50:

մարում իրական և եզրակացնում է. «Այսպիսով՝ հօգս է ցնդում շորրորդ գրքի գոյության խնդիրը»¹⁸:

Բ. Գևորգյան-Վաղարշապատցին «Խորենացուն Խորենացիով պետք է հասկանալ» գրքում ունի «Խորենացին գրել է շորրորդ գիրքը՝ զուխը, ուր բերելով Խորենացու խոստովանությունները»¹⁹ եզրակացնում է. «Այս նատվածներից պարզ տեսնում ենք, որ Խորենացին խոստանում էր վերադառնալ այս նյութին: Ուրիշ առիթներով ևս խոստանում է, և հիշեցնում է վերադառնալ գրել, սակայն՝ «առտառնյ այս գրոց», և այս բառերը գրում է մեր ձեռքը արդեն հասած Պատմության վերջին գրքի վերջին գլխում: Միևնույն ժամանակ քաջ գիտեմ, որ նա իր Հայոց Պատմության (ա, բ, գ) գրքերում և ոչ մի անգամ էլ վերադառնել այս նյութին: Առարկելով Գ. Տեր-Մկրտչյանին, որը շորրորդ գրքի միակ վկայություն է համարում Արծրունու միակ շորրորդ բառը գրում է. «Այդ դեպքում ցնորք կլինեիր Խորենացու շորրորդ գրքի մասին մտածելը: Բայց նույն Արծրունին գրում է նաև Խորենացու շորրորդ դպրության մասին, որը գիրք է նշանակում, և որը նկատի ունի շորրորդ դավազը»²⁰:

Նորայր Բյուզանդացին այդ հատվածին անդրադառնում է «Մեկնութիւն հատուածի իրիք Պատմութեան Թովմայ Արծրունու, յորում և զշորրորդ գրոց Պատմութեան Խորենացու» լուսաբանության մեջ: «Վան ի հատուածիս երկու մեծ սխալք՝ որ պատմագրինն են, և մի մեծ շփոթութիւն՝ որ նորա գրակազմին կամ ընդօրինակողին թուի վերագրելի»²¹: Այս շփոթը առաջացել է բնագրի թղթերի ետևառաջությունից, որից ստացվել է, որ Խորենացին շորրորդ գրքում գրում է, որ ինքը ապրել է հարյուր քսան տարի..., և հեղինակը «որպես գրեալ աւանդեցաւ մեզ» բառերից մինչև վերջ տեղափոխում է Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահվան մասին հատվածի վերջը և եզրակացնում, որ «Թովմա Արծրունու վերոհեղալ բանիւք կտեղեկանանք, թէ ստուգիւ Խորենացի իւր խոստաբանեալ վերադարձութեան Պատմութեանն շորրորդ դրուագին (=գլխոյն) ընդարձակօրէն խոսած է գերկացունց վարդապետաց իւրոց զՍահակայ եւ զՄեսրոպայ, «ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին (=ի հատուածին դրուագելոյ ի վերայ երկեցունց), և անշուշտ այն հատուածէն կառնու Արծրունին, թէ Սահակ ապրեցաւ 120 տարի»²²: Բյուզանդացին գրում է, որ Ղ. Ալիշանի մոտ «երեցունցը» ճիշտ է: Զի ընդունում նաև Գ. Տեր-Մկրտչյանի Գ և Դ տառերի շփոթման ենթադրությունը: «Տեր-Մկրտչեան կկարծէ, թէ այդս է ցնդում շորրորդ գրքի գոյութեան խնդիրը», անընդունելի է ինձ յառաջին բառէն մինչև ի վերջինն... Տեր-Մկրտչեան հասու եղած չէ խոստաբանեալ բառի զօրութեան, զորմէ բնաւ չիօսիր... Որչափ ստույգ է թէ Խորենացի հապճեպով գրած է զերիս գիրս Պատմութեան իւրոյ, նոյնչափ ստույգ է թէ ունէր ի մտի գրել պարապով յաւելուած մի կամ շորրորդ գիրք: Ապա բերելով Խորենացու խոստաբանությունները, շարունակում է. «Մեծապէս կսխալի համարելով թէ «այդ միակ շորրորդն է մեր ամբողջ գրականութեան մէջ, Խորենացու շորրորդ գրքի գոյութիւնը վկայող»։ և թէ «մինչև այժմ ոչ մի տեղում չէ հայտնուել Խորենացու շորրորդ գիրքը, և ոչ մի ուրիշ տեղում էլ չի հիշված այդ մասին բացի Արծրունու այս հատվածից»։ Մինչդեռ Արծրունի որոշակի կրսէ այլուր

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Բ. Գևորգյան (Ճ ու դ ու ղ ա ն ց) Վաղարշապատցի. Խորենացուն Խորենացիով պետք է հասկանալ. Վաղարշապատ, 1889, էջ 19—20:

²⁰ Նույն տեղում, էջ 22, 24:

²¹ Ն. Բյուզանդացի. Կորին վարդապետ՝ նորին Թարգմանութիւնք, Գիրք Մակարայեցոց, Նւթաղ Աղեքսանդրացի. Ազաթանդեղոս և Փաւստոս Բուզանդ. Տիրիս, 1890, էջ 390: Պատմագրի սխալներն այն են, որ նա Սահակ Բագրատունի պատմութեան շփոթում է Խոսրով երրորդի սպարապետի հետ և Խորենացուն համարում Կորյունի ուսումնակից:

²² Նույն տեղում, էջ 394:

«շորորդ դպրութիւն Մովսէսի», «Ծրկրորդ պատմագրութիւն Մովսէսի», «Խոսա-
տարանեալ վերադարձութեան պատմութեան», այսինքն վերադարձութիւն
կամ յաւելուած պատմութեանն դոր խոստացեալ էր գրել Մովսէս խորե-
նացի»²³:

Չորրորդ գրքի հարցին անդրադառնում է Ստ. Մալխասյանը Մովսէս
խորենացու Հայոց Պատմության 1940 թ. աշխարհաբար հրատարակության
նկրածութեան մեջ: Բերելով Թովմա Արծրունու վկայությունը եզրակացնում
է. «Այս խառնաշփոթ հատվածը գտել է իրեն հավատացողներ, մասնավորա-
պես Ղ. Ալիշանին և էմինին»: Առարկելով նրանց որոշ ենթադրություններին
դրում է, որ «մյուս ենթադրություններն էլ մնում են լուկ անապացույց են-
թադրություններ և այդպես էլ կմնան»:

Դ գրքի գոյությունը պետք է բացեիրաց մերժել, քանի որ ուրիշ ոչ մի
հեղինակ նրան չի հիշում, ոչ մի հեղինակ նրանից ոչ մի քաղվածք չի անում,
այլ բոլորը առաջին երեք գրքից օգտվելուց հետո դիմում են ուրիշ հեղինակ-
ների... Իսկ Գ գիրքը իր անունով «Աւարտաբանութիւն մերոց Հայրենեաց»
և վերջաբանի ողբով, ապացուցում է, որ Գ գրքով էլ վերջանում է Հայոց
պատմությունը: Այնպես որ Թովմա Արծրունու մի անգամ հիշած Դ գիրքը
պետք է համարել կամ թյուրիմացություն կամ աղավաղություն, մանա-
վանդ, որ Արծրունին հայտնի է իբրև անհավաստի մատենագրական և պատ-
մական տեղեկություններ հաղորդող հեղինակ»²⁴:

Նա առաջարկում է շորորդը դարձնել երրորդ, որպես Դ և Գ տառերից
առաջացած շփոթի հետևանք, իսկ Զենոն կայսրի ժամանակը՝ «իր կողմից
եզրակացրած» թիվ: Այս բոլորից հետո անում է ամի նոր ենթադրություն,
Թովմա Արծրունու վերոհիշյալ խոսքը պետք է կարդալ՝ «ի շորորդ դրուա-
գի խոստաբանեալ պատմութեան Մովսէսի խորենացու» վերադարձութեան
ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին» և հասկանալ այն մտքով, թե
Թովման ձեռքի տակ ունեցել է խորենացու մի Պատմություն, որի մեջ երեք
հայտնի գրքից հետո դրված է եղել իբրև հավելված՝ Պիտոյից գիրքը, որը
նա կոչում է շորորդ»²⁵:

Ենթադրությամբ սկսում և ենթադրությամբ էլ ավարտում է իր ենթա-
դրությունները, որոնք «մնում են լուկ անապացույց ենթադրություններ և այդ-
պես էլ կմնան» (չակերտների մեջ Ստ. Մալխասյանի կարծիքը Ղ. Ալիշանի
և էմինի տեսակետների մասին):

Հրանտ Ք. Արմենը «խորենացիի Պատմութեան «շորորդ» գիրքը» ուսում-
նասիրության մեջ գրում է. «Զենոն կայսրը գահ ելավ 474-ին: Ըստ իս,
շորորդ դրվագ ըսվածը գործ չունի Ադամէն մինչև Զենոն եղած պատմու-
թեան: Այդ պատմությունը խորենացիի Ա, Բ և Գ գիրքերուն մեջ է: Այ-
սինքն Գ գիրքը փոխանակ մեր այժմյան ունեցած 440 թվականներին լմըն-
նալու, կվերջանար 470-ական թվականներուն: Ապա շորորդը դրվագով խո-
րենացին հավելլալ տեղեկություններ կուտար իր ուսուցիչ Սահակ կաթողի-
կոսի մասին»²⁶: Այս ասված է Արծրունուց բերված քաղվածքից հետո: Հի-
շելով շորորդ գրքի գոյությունը ընդունողներին և մերժողներին, գրում է.
«Վերջին արտահայտվողը, որքան գիտեմ, Ստ. Մալխասյանցն էր: խորենա-
ցիի իր թարգմանության ներածականին մեջ ան քիչ մը ջղայնացած կըսե.
«Դ գրքի գոյությունը պետք է բացե ի բաց մերժել» և բերելով մեզ ծանոթ
վերոբերյալ քաղվածքը հարցնում է՝ «Միթե կարելի է թյուրիմացություն կո-
չել, երբ Արծրունին խորենացիի Պատմագիրքը ունի իր ձեռքը, կարդացած

23 Նույն տեղում, էջ 394—396, ծՔ. 10:

24 Մովսէս խորենացի. Հայոց պատմություն. Երևան, 1940, էջ 18—19:

25 Նույն տեղում, էջ 31:

26 Հրանտ Ք. Արմեն. Պատմական քննարկումներ. Բեյրութ, 1968, էջ 70—71:

է զայն ուշի-ուշով... և քանի անգամն ալ կհիշե իր գրած Պատմութեան մեջ»²⁷։

Սահակի մասին խոստացած ճառը տեսնում է Ողբի մեջ, որն ընդամենը 175 տող է, գործն կեսին ավելին ի մասնավոր Սահակի կորուստին համար իր սրտամորմոք արտահայտությունն է²⁸։ Այս համարում է չորրորդ մաս, որ հղել է 440 թ. հետո գրվածի մեջ, որի մյուս մասնիւր (410—470) դուրս են հանելու ինչու։ Ստորենացիի դուրս գցված գլուխները կենդանացնեն Վարդանանց պատերազմի պատմությունը, հիտված մարզպան Վասակ Սյունիի և անոր գլխավոր գործակից Տիրոց Բագրատունի իշխանի տեսակետներն²⁹։ Վճիռոց Բագրատունին Սահակ Բագրատունի իշխանի հայրն էր։ Վասակի զինակիցը։ խորենացին նրանց թերևս եղիշից և Ղազարից տարբեր գնահատական է տված։ Ժ—ԺԱ դարում, երբ սրբացված էր Վարդանը, խմբագրվել է խորենացին և դուրս է բերվել այդ գլուխները, Ողբը դարձել է երրորդ գրքի վերջը³⁰։

Այսպիսով, Մովսես խորենացու «Հայոց Մեծաց պատմության» Չորրորդ գրքի վերաբերյալ երեք տեսակետ կա։ Առաջին՝ չորրորդ գրքը հղել է, բայց կորել է, հնարավոր է, որ գտնվի (Ղ. Ալիշան, Բ. Գևորգյան-Ճուղուրյան, Ն. Բյուզանդացի)։ Երկրորդ՝ հղել է, մի մասը՝ դուրս է թողնվել հետագայում, մյուսը ձուլվել է մեզ հասած Պատմության մեջ (Հրանտ Ք. Արմեն)։ Եվ երրորդ՝ այն գոյություն չի ունեցել (Գ. Տեր-Մկրտչյան, Ստ. Մալխասյան)։

Եվ իրարամերժ, և իրարամետ այս տեսակետների առաջին սրղյուծը փաստերի ու փաստարկների, պատճառաբանությունների և հակադրությունների հրապարակ հանելն էր, որոնք ավելի ու ավելի ծանրացնում են Մովսես խորենացու Հայոց պատմության չորրորդ գրքի գոյության նշարը։ Այս կուտակումը, ինչպես նաև այդ մասին վկայություններ պարունակող Թովմա Արծրունու Պատմության մեզ հայտնի հնագույն օրինակի առձեռն ունենալու բարեխախտությունը, ինչպես նաև հնագույն փաստերի նորոգ վերլուծությունը իրավունք են տալիս կրկին անդրադառնալու դարավոր պատմություն ունեցող խնդրին, որի լուծմանը նպաստում են նաև ձեռագրագիտության ու հնագրագիտության արդի նվաճումները։

Բ. Թովմա Արծրունու Արծրունյաց տան պատմության հնագույն ձեռագիրը

Մովսես խորենացու Հայոց Մեծաց պատմության չորրորդ դրվագի մասին ուսումնասիրությունը սկսում ենք Թովմա Արծրունու Պատմության հնագույն ձեռագրի քննությամբ, մի երկ, որի հեղինակը ոչ միայն տեղեկություն է հայտնում չորրորդ գրքի մասին, այլև օգտագործելով այն իր Պատմությունը շարադրելիս, քաղվածքներ է բերել ու մատնացուցել արել վկայության աղբյուրը։ Սրանով մեզ հնարավորություն է տալիս ծովածավալ հայ մատենագրության մեջ փնտրելու Պատմահոր անմահ ստեղծագործության չորրորդ դրվագը։

«Պատմութիւնս այս զոր արարեալ ստուգաբանութեամբ անյաղթ և գիտնական վարդապետն Թովմայի, սկսեալ ի յԱդամայ մինչև ցնոյ, և անտի եկն աստիճան վերուստ ի վայր մի առ մի, և բազում աշխատանք ճշգրտաբար եկն հաս ի յազգն Արծրունեաց, և մի ըստ միոջէ շարակարգեալ զազգն և զիրն և զթիւն և զպատճառս նոցա հանդերձ պատերազմաւ ընդդէմ այլազգեաց... Շարագրեցաւ... ի թուականութիւնս Հայոց յեօթն հարիւրերորդի յիսներորդի երկրորդի (1303) ... ի դուռն մեծ և պանծալի սուրբ Խաչիս Աղթամարայ»³¹։

²⁷ Նույն տեղում, էջ 74։

²⁸ Նույն տեղում, էջ 78։

²⁹ Նույն տեղում, էջ 80։

³⁰ Նույն տեղում, էջ 86։

³¹ Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 10451, էջ 494—496։

Գրիշը սույն ձեռագիրն արտագրել է XII դարում, վասպուրականի Ստեփանոս Ալուզ իշխանի նորոգել տված հին ձեռագրից. «Սա (Ալուզը—Ա. Մ.) ստացաւ զՄատենան Թովմայի Պատմագրիս և ետ նորոգել վերստին յիշատակ իւր և բարի ծնաւդաց իւրոց, և աստուածատուր պտղոյ որովայնի իւրոյ խեղճեցին...»³²։ Դանիել Աղթամարցու ընդօրինակութեան ժամանակ Ստեփանոս Ալուզի օրինակը արդեն քայքայված էր տեղ-տեղ, թերթակորույս և թերթաշփոթ, ինչպես երևում է ձեռագրից և գրչի վկայութիւնները³³։

Դժվարութիւնների մասին գրիշը խոստովանում է նաև գլխավոր հիշատակարանում. «...եթէ աւելի կամ պակաս գտանիցի ի սմա, եթէ. տուն, և եթէ ստոր, և եթէ յայլ ինչ բառ, ի խէ կամ ի հոյ, զի գիտնականքն քաջ գիտեն, որ ի հին գրեանք այսպիսեանցս ոչ ինչ փոյթ է արարած, և ես անհմուտ գոյով սոցա՝ զոր ինչ լսել էաք յեկեղեցական գրոց ի բառիցս յայսցանէ՝ զնոյն գրեցաք, և զոր արտաքոյ սոցա էր՝ ոչ գիտելով, թէ որպէս էր»³⁴։ Սույն դիտողութիւնները ցույց են տալիս, որ գրիշը հավատարիմ է մնացել իր կոչմանը, որ ձեռագիրն արտագրել է այնպես, ինչպես կա, միայն լուսանցքներում ծանոթագրել է սխալագրութիւններն ու թերթերի շփոթը։ Իսկ մեզ մնում է միշտ հիշել գրիշներից մեկի նախազգուշացումը. «Աղաւջեմ շմեղադրել խոշոր և սխալ գրոյ, զի թէպէտև ի միոջէ գրեցաւ, այլ այլմէ ընդօրինակեցաւ»³⁵։

Ահա սույն ձեռագրում Մովսես խորհնացու շորրորդ գրքի մասին վկայութիւնները. «...գտցես որպէս և ի շորրորդ դպրութեանն Մովսէսի»³⁶, «...որպէս ընթեռնուք ի բանիբուն գրակարգութեանն Մովսէսի տիեզերահուկեալ վարդապետի և Քերթողի և մերոյ լուսաւորութեանցս հաստատագոյն յօրինողի, որպէս պատմէ ի գլուխ երկրորդի պատմագրութեանն»³⁷, «Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահուկեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշագան յօրինածով, սկսեալ յԱդամայ, մինչև ի կայսր Զենոն, որոյ ժամանակ կենացն տեեալ ձգեալ ամս ճի լի և պարարտ ծերութեամբ, որպէս դրեալ աւանդեցաւ մեզ այս ի շորրորդ գրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի խորոնեցոյ վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին, զոր և երանելին Կորիւն ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրոպայս՝ իւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ»³⁸։

Սույն վկայութիւններին մենք կանդաղառնանք համապատասխան տեղերում։ Այստեղ միայն ընթերցողի ուշադրութիւնը հրավիրում ենք հետևյալ հանգամանքների վրա։ Ձեռագրում «շորրորդ» թիվը երկու վկայութիւններում էլ գրված է ոչ թե թվանիշ Դ տառով, այլ բառով՝ «չորրորդ»։ Նշանակում է հեղինակային օրինակում այդպես է եղել և գրիշը այդպես էլ ընդօրինակել է։ Սա գրչութեան արվեստի հիմնական օրենքներից է. «ընդօրին-

32 Նույն տեղում, էջ 498։

33 Նույն տեղում, «Աւաղ, ամէն պակաս է (36 բ լս.), «Այս ճառի վերջս յարինակն պակաս է լեալ, և մեք իսկ գիտեմք։ Ով սուրբ ընթերցող, պատրաստ կացիր այսմ վայրի» (37 բ)։ Ավելի շատ են նաև թերթերի ետևադրութիւնները. «Մինչև ցայս տեղի հասանիցես ժՐ թուիթ ի մէջ անցոյ, մինչ ի գլխագիրն, և զգլխագիրն կարդա, մինչև ՄԹ թուիս անցի, ճառի վերջն պակաս է։ Ապա զայս ժՐ թուիստ ընդ այն միաւորեալ և կարդայ, Զայս որինակի կապն շփոթեալ է և մի ընդ միով անցեալ։ Ողջ լիւր ժՐ թուիթ է և ոչ աւելի կամ պակաս» կարդում ենք 38 ա էջում։

34 Թ ո վ մ Ա ր ծ ր ու ն ի, էջ 496։

35 Ե—ԺՐ դդ. Հիշատակարաններ, կազմեց Ա. Մաթևոսյան. Երևան, 1988, էջ 212։

36 Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 18։

37 Նույն տեղում, էջ 96։

38 Նույն տեղում, էջ 132։

նակել ճշգրտութեամբ: Պատվագրված Դ-ն որ մի տառ էր, երբեք յոթ (չորրորդ) տառով չէին գրի: Գրիչը միշտ թուղթ և ժամանակ խնայելու միտվածություն ուներ, ուստի եթե գրված է չորրորդը նշանակում է հեղինակային է: Նույնը վերաբերում է նաև «երեցունց» բառին, որ սխալ կերպով հրատարակիչները դարձրել են «երկեցունց», ուր ուսումնասիրողները Գ և Դ տառերի շփոթ են տեսնում³⁹:

Դանիել Աղթամարցու ձեռագրում Մովսես խորենացու մականունը գրված է «Նուրոնեցի» ձևով, որն ավելի հարազատ է իր ծննդավայրի անվանը⁴⁰, Ձեռագրի ուշագիւր քննությունը ցույց է տալիս, որ Մովսես խորենացու Պատմության չորրորդ գրքի վերաբերյալ Արծրունու այս հատվածում կան շփոթություններ, որոնք պետք է և կարելի է սրբագրել: Այն սովորական վրիպում է, որպիսիք հանդիպում են համարյա ամեն մի ձեռագրում. գրիչը վրիպում է որևէ տառ, բառ, տող...: Սրբագրելիս այն գրվում է լուսանցքում, հաջորդ ընդօրինակողը լուսանցքից մուծում է բնագրում՝ իր բուն տեղում, որ ցույց է տրվում մուծման նշանով: Բավական է շփոթել տեղը, և անհարիրությունը պատրաստ է: Այդպիսի անհարիր հատված է «որոյ ժամանակ կենացն տեհալ ձգեալ ամս ճի լի և պարարտ...» նախադասությունը, ըստ որի, Մովսես խորենացին իր մասին ասում է, թե ինքն ապրել է հարյուր քսան տարի: Այս անհեթեթությունը միայն սխալի արդյունք կարող է լինել: Ամենայն հավանականությամբ այստեղ կատարվել է այդ սովորական բացթողումը և վրիպումը տեղադրման կամ մուծման ժամանակ և «զոր և երանելի...» բառերից առաջ մուծելու փոխարեն (մուծման նշանն է սխալ գրվել, թե մուծողն է սխալվել) մուծվել է «ուրալս գրեալ աւանդեցաւ...» նախադասությունից առաջ: Սրբագրենք թյուրիմացությունը (փակագծերում առնված է անհարիր նախադասությունը, իսկ տեղափոխվելուց հետո՝ ընդգծված է և այդ, և այն հատվածը, որի հետ ձուլված է եղել):

«Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց Մեծաց, հրաշագան յօրինուածով, սկսեալ Աղաժայ մինչև ի կայսր Զննոն, (որոյ ժամանակ կենացն տեհալ ձգեալ ամս ճի լի և պարարտ ծերութեամբ), որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ Պատմութեանն Մովսէսի խորոնեցոյ՝ վերադարձութեան ի վերայ երեցունց դրուգեալ հատուածին:

Ուրոյ ժամանակ կենացն տեհալ ձգեալ ամս ճի լի և պարարտ ծերութեամբ, զոր և երանելի Կոստան, լուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրոպայ՝ թւումն ստուգութեամբ պատմութեան գայստիկ մեզ հաւատարմացուցանէ»:

Փակագծերում եղած հատվածը տեղափոխվելուց հետո, քաղվածքը ձեռք է բերում պատմական, տրամաբանական կուռ շարադրանք:

«Այս այն Սահակն է, որի հրամանով մեծ վարդապետ, տիեզերահռչակ-

³⁹ Մոռանալով, որ երկեցունցը պետք է գրվեր «Բ եցունց», երեցունցը՝ Գ եցունց, և Բ-ն ու Գ-ն կամ Բ-ն ու Դ-ն իրար հետ չէին շփոթի:

⁴⁰ Ստ. Մալխասյանը գրում է. «խորենացի անունը, որով կոչվում է Պատմահայրը, ցույց է տալիս, որ նա ծնված պետք է լինի խորեն կամ խորեան անունով վայրում: Այս անունով քաղաք կամ գյուղ հայտնի չէր մինչև վերջին ժամանակներս: Նա՝ երբեմն կոչվում է նաև Տարոնացի. Տարոն գավառում եղել է հոռոնի կամ հորոն անունով մի գյուղ: Բայց եթե Մովսեսը այստեղ ծնված լիներ, պետք է կոչվեր խորենցի կամ խորոնեցի, ինչպես մի ժամանակ միսթարյաններից ոմանք գրում էին (նկատի ունի Ալիշանի նշված հոդվածը—Ա. Մ.): Ավելի հավանական է կարծել, թե նա ծնված է Սյունիքում, Հաբանդ գավառի խորենա անունով փոքր գյուղում» (Մովսես խորենացի: Պատմություն հայոց. Երևան, 1968, էջ 5): Թույլմա Արծրունին սրբագրում է Ստ. Մալխասյանի սույն հավանականությունը և խորենացուն կրկին գրանցում է հայերենի Տարոն գավառի խորոն գյուղում, ուր ծնվել է, և որից ստացել խորոնեցի մականունը:

չակ քերթող Մովսեսը գրեց Հայոց Մեծաց պատմության գիրքը՝ հրաշալի հորինվածքով, սկսելով Ադամից մինչև Ջենոն կայսրը, ինչպես գրվել և մեզ է ավանդվել Մովսես Խորենացու Պատմության շորրորդ գրքում՝ հրեք գրքերի հավելվածում»:

Անհարիր նախադասությունը, աղատվելով ակամա շրջափակումից, ձուլվում է հատվածի շարունակությանը, բայց միանալով նրան, չի կապվում նախորդ քաղվածքի բովանդակության հետ: Ավելին, չի կապվում նաև հաջորդ պարբերության հետ: Դա նշանակում է, որ այն (ընդգծված հատվածը) նույնպես իր տեղում չէ: Ինչպես նախկին տեղում, այստեղ ևս անհասկանալի է մնում, ում է վերաբերում 120 լի և պարարտ տարիների կյանքը, այն ընծայվում է Մովսես Խորենացու, Սահակ Պարթևի, Սահակ Բագրատունու, Մեսրոպ Մաշտոցի՞ն...

Սահակ Պարթևի մասին Թովմա Արծրունու Պատմության մեջ արդեն նշված է, որ նա ապրել է 120 տարի: Մովսես Խորենացին այդքան չի ապրել, նա իր Պատմությունը գրելու ժամանակ, 470-ական թթ., արդեն ծեր էր և հիվանդոտ, և ևս կես դար ապրել չէր կարող: Սահակ Բագրատունին երիտասարդ հասակում զոհվեց: 120 տարի չի ապրել նաև Մեսրոպ Մաշտոցը, բայց նա ապրել է Սահակ Պարթևի չափ, գործել և մահացել նրա հետ: Սրբերի մասին այդպես գրել կարելի է: Իաց կա այդ բանը հուշող սփականակ: Ընդգծված հատվածի սկիզբը, ուր հիշվում է Մեսրոպի անունը, կարող էր նաև չլինել, բայց կա, և կարծես հուշում է, որ սույն հատվածը նրա մասին նախորդ հատվածին կից է, և որ այդ թվականը վերաբերում է նրան: Բանն այն է, որ Կորյունը իր Պատմության մեջ վկայում է, որ Մեսրոպը ապրել է մինչև խոր ծերություն: Վկայությունը վերաբերում է Մեսրոպին, և շարունակությունն է սրանից առաջ եղած Մեսրոպի մասին պատմության, որը գտնվում է նախորդ թերթի վրա:

Նորայր Բյուզանդացին ոչ թե մեր նշած հատվածը, այլ ամբողջական հատվածը տեղափոխում է Մեսրոպի պատմությունից հետո («որպես գրեալ աւանգեցաւ մեզ...»)⁴¹, որը վերաբերում է Վերադարձութեանը, և ոչ Մեսրոպի մահվանը:

Ն. Բյուզանդացու կարծիքով Խորենացին իր խոստաբանյալ վերադարձության (=գլխոյն) մեջ ընդարձակորեն «խոսած է գերկոցունց վարդապետաց իւրոց զՍահակայ եւ զՄեսրոպայ»⁴²: Այստեղ թյուրիմացությունն ակնհայտ է. ինչպես տեսանք Արծրունու մոտ «երկեցունց» չկա, այլ «երեցունց դրուագեալ հատուած» է, և այն վերաբերում է ոչ թե երկու վարդապետներին՝ Սահակին ու Մեսրոպին, այլ Խորենացու Պատմության երեք գրքերին, «ի վերայ որոց» Խորենացին շարադրել է շորրորդ գիրքը⁴³:

41 Ն. Բյուզանդացի. նշվ. աշխ., էջ 392:

42 Նույն տեղում, էջ 894:

43 Ահա այդ հատվածի մեր տեղափոխությունը. «նու այդ ամենայն այսպիս Լոհալ, կեցեալ սուրբ Սահակ ամս ձի (120)՝ փոխի յաշխարհէս ի կարգս հրեշտակաց, և տարեալ հանդուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ, ի տեղուղ վկայարանի Սրբոյն Յոհաննու Մկրտչի և Աթանագիին վկային»:

Ի նմին ամի յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի ե սուրբ վարդապետն Մաշտոց, և խաշանշան լուսով խաղացուցանեն բազմութեամբ նախարարացն Հայոց ի ձեռն Վահանայ Ամատունոյ, որ էր ի ժամանակին սպարապետ Հայոց: Եւ տարեալ հանգուցանեն զնա ի յՕշական դեօզ, ի գաւառին, որ կոչի Ոտն Արագածոյ, որոյ ժամանակ կենացն աւելալ ձգեալ ամս ձի, լի և պարարտ ծերութեամբ, զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրոպայ՝ յիւրումն ստուգարանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ»:

Այնուհետև գալիս է. «Յամի երկրորդ Յազկերտի որդոյ Վռամայ երկրորդի բարձաթաւարութիւնն ի տանէն Հայոց, որ տեւաց ամս ՆժԺ (415) և վախճանեցաւ»:

Յետ բաճալոյ Թաւառութեանն ի տանէն Արշակունեաց եւ հայրապետութեանն ի տանէն

Ձեռագրում դրված տեղում անհարիր հատվածը, որ բազմաթիվ թյուրիմացությունների տեղիք է տալիս, իր նոր տեղում հարստացնում է Մաշտոցի մասին միջնադարյան պատկերացումների շրջանակը, նրան վերագրելով Սահակ Պարթևի տարիքի չափ տարիներ⁴⁴։

Սխալ տեղագրության համար դեր են խաղացել հանդիպակաց էջերու գրված լինելը և խորենացու անվան ներկայությունը, ուստի մոծվել է այնտեղ, որտեղ գտնվել է տիեզերահռչակյալ քերթողի մասին հատվածը։ Երբ սույն հատվածը իր տեղում էր, այնպես էր դուրս գալիս, որ վերադարձության մասին տեղեկություններ մեզ են հասել Կորյունի պատմությունից, «ուստի և մեք ըստ կարի մերում անցեալ գտաք զհամառօտութիւն զրուցատրութեանս, զի շարագրեալ յայտարարութեամբ յանդիման կացուցալքեզ...» դիմում է Թովմա Արծրունին իր պատվիրատու Գագիկ Վասպուրական Հայոց մեծ զորավարին։ Բյուզանդացու տեղափոխությամբ ստացվում է, որ վերադարձությունը Սահակի և Մեսրոպի մասին է, որ խոստացել էլ խորենացին գրել, և այդ իմանում ենք Կորյունի Պատմությունից։ Մինչդեռ մի քանի տողի մեր կատարած տեղափոխությունը վերացնում է նրանից առաջ և հետո եղած հատվածների միջև ընկած խոչընդոտը և նրանց կապում միմյանց հետ, որպես մի ամբողջի մաս և նույն տրամաբանությամբ շարունակվում է մինչև առաջին դպրության վերջը։

Այժմ տեսնենք ինչ առիթով են այստեղ հիշվում խորենացին և իր Պատմությունը։

Արծրունյաց տան պատմության առաջաբանում հեղինակը փառավորելով նախորդ պատմագրքերն ու պատմիչներին իրենց ծառայության համար խոստանում է իր պատվիրատուին՝ Վասպուրականի Գրիգոր իշխանին, կատարել նրա ցանկությունը, շարադրել նախնիների ազգաբանությունը և որպիսությունը, և մատնանշում այն աղբյուրները, որոնցից օգտվել է ինքը (սահմանափակում է մատնանշում այն աղբյուրները, որոնցից օգտվել է ինքը)։ «Համառօտեացուք ի մատնանս զայսոսիկ ըստ կարի մերում օժանդակեալ ի գրոց հնագէտ պատմութեանց... և արտաքին վիպապատմացն աշխատասէլ և մտահարուստ արանց»)։ Առաջին դպրությունը շարադրում է «բոլոր Եւսեբեա բազմայեղ եղանակաց խուզմանցն, և ըստ Ափրիկյանոսի հաւատարմաբանութեանն և ըստ Մովսէսի Քերթողի՝ նախ ի մէջ առից զորպիսութիւն ազգացն բաժանմանց գրել»⁴⁵։

Առաջին դպրության մեջ Ազգերի բաժանումը, Արծրունյաց տոհմի ազգաբանությունն ու Հայոց պատմության շարադրանքը հասցնում է մինչև Արշակունիների թագավորության բարձունքը և Սահակ Պարթևի ու Մեսրոս Մաշտոցի մահը։ Այն շարադրված է հիմնականում Մովսես խորենացու «Հայոց մեծաց պատմութան», նաև՝ չորրորդ գրքի հիման վրա։

Այստեղ Թովմա Արծրունին ամփոփում է իր Պատմության առաջին դրությունը գեղեցիկ համեմատությամբ։ Պատվիրատու Հայոց մեծ սպարապետ և զորավար Սահակ Բագրատունու և մեծ վարդապետ ու տիեզերահռչակյալ քերթող Մովսես խորենացու ջանքերով ստեղծվեց «Հայոց Մեծալ պատմությունը», որն ամփոփվում էր (Ադամից մինչև Ձենոն կայսր) երեկ

սրբոյն Գրիգորի, Ղևոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր Սրբոյն Սահակայ...» և այլն (Թովմա Արծրունի, էջ 120)։

44 Գ. Տեր-Մկրտչանը ընդունելով, որ այստեղ 120 տարին վերաբերում է խորենացուն դրում է. «Ակնհերե է, որ հարյուր քսան տարին կամ երկարակեցության այս լրումը մի քանի տեղաշարժման տուրք է՝ վճարված երկու պատկառելի ծերունիներին, մի ավանդություն՝ ըստ տեղծված դարեր անցնելուց հետո» (նշվ. աշխ., էջ 52)։ Հատվածը տեղափոխելուց հետո երբ 120 տարին վերագրվում է Մեսրոպին, բարեպաշտական տուրքը ավելի է պատշաճում այս «երկու պատկառելի ծերունիներին», Սուրբ Սահակին և Սուրբ Մեսրոպին, որոնք զործեն համատեղ, համաշունչ ու միահռչակ, և նրանց մասին ավանդություններն էլ պետք է լինեի դարավոր, և տուրքը՝ բարեպաշտական։

45 Թովմա Արծրունի, էջ 10, 12։

դրվագյալ հատվածների և չորրորդ դրվագի՝ վերադարձության մեջ: Իսկ հիմա չաջ ուսումնասիր և Հայոց մեծ զորավար Գագիկ Վասպուրականի պատվերով և Թովմայի ջանքերով ստեղծվում է Արծրունյաց տան Պատմութունը: Բերենք այդ հատվածը՝ մեր սրբագրությամբ.

«Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց Մեծաց, հրաշագան յօրինուածով, սկսեալ յԱղամայ մինչև ի կայսր Զենոն, որպէս գրեալ ատենդեցաւ մեղ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ Պատմութեանն Մովսէսի Խորենացու Վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին:

Ուստի և մեր ըստ կարի մերում անցեալ գտաք զհամառօտութիւն զուցատրութեանս, զոր շարագրեալ յայտարարութեամբ յանդիման կացուցաք քեզ, դրեալ հաստաանալ կայ հաւատարմապէս վարդապետացս քաջաբան և ի իմաստութեամբ շարագրածք հրաշափառագոյնք:

Ապա փոյթ ինձ Թովմայի, որ ոչ վերջոտնեալ կալայ ամօթով զյետին տեղիս, այլ փոխանակ սոցայ մատեայ ի տեղիս յայս, ձեռն արկեալ անիմաստալար ի լանհմտութեամբ և անհանճարութեամբ բուռն հարկանելով զմեծ դայս քերթածութեանէ:

Իայց հրաման րո ճոխութեանդ ձգեաց զիս զայս մեծ ձեռնարկութիւնս, սակս ոբոյ լայնաձգեաց: արտաքոյ շաղակրատոյ լեզուաց փառամոլ ոգոց: Կատարեցաւ դպրութիւն առաջին Պատմութեան Հայոց ըստ ազգաբանութեան Արծրունեաց սեռի»⁴⁶:

Մովսես տիեզերահռչակալ քերթողը Մովսես Խորենացին է: Նրա քերթվածքը կոչվում է «Պատմութիւն Հայոց Մեծաց»: Այն սկսվում է նախաստեղծ Աղամից և հասնում մինչև Զենոն կայսրը՝ 474 թ.: «Հայոց Մեծաց պատմութեան» ընդգրկման ժամանակահատվածի մասին սույն վկայությունը գտնվում է Խորենացու Պատմության չորրորդ դրվագում: Այն Մովսես Խորենացին խոստացել էր գրել իր պատմության երեք գլուխներից հետո, որպես հավելված, ուստի չորրորդ դրվագը կոչվել է Վերադարձություն, այսինքն՝ հավելված:

Գ. Մովսես Խորենացու խոսաբանությունները¹

Այժմ քննենք Հայոց պատմության մեջ Մովսես Խորենացու խոստաբանությունները:

Հայտնի է, որ Քերթողհայրը «Հայոց Մեծաց պատմությունը» գրել է հստակ ծրագրով, որը երևում է ոչ միայն ողջ շարադրանքից, այլև գործընթացում Սահակ Բագրատունու առաջարկների ու պահանջների պատասխաններից, պատճառաբանություններից: Նախօրոք ծրագրվածայնության պահանջներից է նաև որոշ նյութերի զանց առնելու և նրանց առանձին ներկայացնելու որոշումը, որպեսզի աշխատությունը ծանրաբեռնվելով չերկարի, ձանձրալի չդառնալ, չկորցնի նպատակաւացությունը, այլ ընթերցվի կարոտելով, որպես ճշմարիտ պատմություն⁴⁷:

Խորենացին առաջին գրքի երրորդ գլխի վերջում, համաձայնելով պատվիրատուի պահանջին, «երկար և շահաւոր գործով զազգիս մերոյ կարգել զպատմութիւն ճշդիւ... ի ժամանակէ անկարգ ամբարտակին շինուածոյ մինչև ցայժմ», գրում է թե ինչպես պետք է օգտագործի ձեռքի տակ ունեցած նյութը. «Սկսայց յորոց և այլքն, որք եկեղեցւոյ և ոյք ըստ Քրիստոսի, աւելորդ համարելով զարտաքնոցն երկրորդել յաղագս սկզբանն առասպելս, բայց եթէ զկնիսն ժամանակս ինչ արգելք և զարս յայտնիս, որում և աս-

⁴⁶ Նույն տեղում, էջ 122:

⁴⁷ Մովսես Խորենացու Պատմություն հայոց, Երևան, 1981, էջ 307:

տուածայինքն ի ճահ գայցեն պատմութիւնք բանից, մինչև ի հարկէ երթեալ հասանիցեմք ի հեթանոսականսն զրուցատրութիւնս, սակայն և ի նոցանէ՝ զոր ինչ հաւաստին կարծեմք առնուլ⁴⁸։ Ուրեմն հետևելով եկեղեցական մատենագիրներին և ըստ քրիստոնեական կրօնի, սկզբնական պատմության մասին արտաքին հեղինակների առասպելները չի օգտագործում, որովհետև կրկնություն կլինի։ Հետագայում կհիշվեն այն դեպքերն ու անձինք, որ զուգադիպում են Ս. Գրքի պատմությանը։ Իսկ երբ կհասնեն հեթանոսական զրուցներին, հորենացին կվերցնի այն, ինչ հավաստի կհամարի։

Հաջորդ՝ Դ գլուխը, հորենացին վերնագրում է. «Յաղագս զի ոչ սակա Ադամայ և այլոց նահապետացն միաբանին այլքն ի պատմագրաց» և նշում է այդ պատմագիրների անունները. «Պարտ էր մեզ սակալ ինչ անցանել բանիւք, թէ ընդէր հակառակ Հոգւոյն խորհեալ անմիաբանեցան այլքն ի պատմագրաց, զԲերոսեայ ասեմ, զԲազմավիպէն և զԱբիդենայ, կամ զնոյն ինքն զՆաւակատուցէն և զայլոց նահապետացն, ոչ միայն վասն անուանցն և ժամանակաց, այլ և վասն ոչ սկիզբն զառ ի մէնջ հաւատարմացեալս կարգելոյ ազգի մարդկան»։

Արյուդենոսը մյուսների, այսինքն Բերոսոսի և Բազմավիպի նման Ադամի մասին գրում է, որ «եւ զնա ամենախնամն Աստուած եցոյց հովիւ և առաջնորդ ժողովրդեանն», որից հետո ասում է. «Թագաւորեաց Աղապրոս (Ադամ—Ա. Մ.) շարս տասն», որ լինում է երեսուն վեց հազար։ Նոյին էլ ուրիշ անուն են տալիս և խիստ երկարակեցություն, թեկուզ և ջրհեղեղի և երկրի ապականության մասին խոսում են Ս. Գրքի համաձայն։ Նրանց առաջարկած թվերը հաշվելով ու հաշվարկելով, հորենացին գրում է, որ նրանք չեն համաձայնում առաջարկված «անհուն թվերին և ճշմարիտ ժամանակին»։ չեն հավասարի, երբեմն նվազ գալով և երբեմն խոշոր թիվ գումարելով։ Ինչպե՞ս վարվել։ Ահա այստեղ հորենացին խոստովանում է. «Արդ օրէն էր մեզ աստանօր զկարծիս նոցա յայտնել ըստ կարողութեան, թէ զինչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ խորհեցան այսպէս զայսոսիկ գրել, այլ վասն երկարութեան առաջիկայ գործոյս՝ այլում տեղոյ և ժամանակի զայսոսիկ թողեալ, հատցուք աստանօր զբանս, սկսանելով յաղագս այսորիկ՝ որպէս և հաւատացեալ եմք⁴⁹, և սկսում է Ադամ նախաստեղծից։ Ինչպես տեսնում ենք, հորենացին խոստանում է հին մատենագիրների կարծիքները, իր կարողության սահմաններում, բացատրել ուրիշ տեղում և ժամանակում։ Դրանցից առաջինը հանուր մարդկության արմատի կամ ծայրի մասին է, որ հայտնում են Բերոսոսը, Բազմավիպը և Արյուդենոսը, չմիաբանելով Սուրբ Գրքի հետ, որը թողնում է հետո ասելու։

Սա նշանակում է, որ հորենացին հետագայում պետք է բերի նրանց շարադրանքը, որոնցում արտահայտված են հեղինակների կարծիքները, և բացատրի թե նրանք ինչ մտածողությամբ են այդպես գրել։ Այս նշանակում է նաև՝ որ մենք հորենացու խոստացածը պետք է փնտրենք երեք գրքերից դուրս։ Եվ, վերջապես, որ նահապետների կամ արմատի մասին հին մատենագիրների այն կարծիքները, որոնք համընկնում են Ս. Գրքին և որոնց հավատում է ինքը՝ հորենացին, բերում է շարադրանքում և բացատրում հենց տեղում, կամ՝ հղում է աղբյուրը։

Այստեղից եզրակացություն. Մովսես հիշյալ աշխատանքը, ոչ թե նրա միահար շարադրանքը պետք է լինի, այլ իր օգտագործած հեղինակների մատենագրական երկերի շարադրանքը, պատմաբանի բացատրությամբ. «Թէ զի՞նչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ խորհեցան այսպէս զայսոսիկ գրել»։

Հորենացին խոստաբանված միավորները բերել է հեղինակների անուն-

⁴⁸ Նույն տեղում, էջ 14։

⁴⁹ Նույն տեղում, էջ 16։

ներով. և որոշակի ամբողջականությամբ. և հասկանալի է, որ դրանց մեծ մասը եղել են օտար հեղինակներ և պատմություններ⁵⁰:

Պատմության երկրորդ գիրքը («Բան միջակ պատմութեան մերոցն նախնեաց») սկսում է Ալեքսանդր Մակեդոնացուց և հասնում մինչև քաջ և սուրբ մարդու՝ Տրդատի թագավորությունը: «Բայց գրեմ կարճ ի կարճոյ՝ որ ինչ մեզ անկն է, և դաւելորդսն թողում»: Խորենացին այստեղ էլ շարադրում է կարճ ի կարճոյ, իսկ թողնված կարևորները, բնականաբար, պետք է ներկայացվեն վերադարձության մեջ, սկզբում տրված խոստարանության համաձայն: Այդ շխտացած բայց բերած շարադրածներից է Ղ. Ալիշանի հայտնաբերած հատվածը, որի մասին վկայում է Թովմա Արծրունին. «Բայց մեք գլոյթ հռչակալսն միայն նշանակեցաք սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիագարդութեամբ, որպէս ընթեռնութի բանիբուն գրակարգութեանն Մովսէսի տիեզերահռչակեալ վարդապետի և Քերթողի և մերոյ լուսաւորութեանցս հաստատագոյն յօրինողի, որպէս պատմէ ի գլուխ երկրորդի պատմագրութեանն»⁵¹:

Վերջին նախադասությունը Գ. Տեր-Մկրտչյանը թարգմանում է. «Ինչպես պատմում է երկրորդ գրքի վերջում»: Նա գրում է. «Ի գլուխ» բառը մենք վերջ ենք թարգմանում ... երկրորդ նշանակությամբ գործածված, իբրև վերջ, կատարած»: «Ի գլուխ երկրորդի պատմագրութեանն», այսպիսով, նշանակում է շորորոգ գրքի կամ երկրորդ պատմագրության վերջին նյութն է եղել Տրդատի թագման պատմությունը:

Բայց չէ՞ որ Տրդատից հետո է ապրել Սահակ Պարթևը, որի մասին խոստացել է Խորենացին «հրաշափառագունիւ անցանել բանիւ, ըստ արժանի սրբոյ հօրն դրուատից ...»: Այս փաստը թերևս զորավիգ է Հրանտ Ք. Արմենի ենթադրության մի մասի ճշմարտության. «...Կենթադրեմ թե Դ զավագ ըսածի նյութն էր Սահակ կաթողիկոսի մասին Խորենացիի գրի առած մեկ ընդարձակ գովասանական ճառը: Այս ենթադրություն է, բայց ատոր համար իսկ ցուցմունք, թերևս ապացույց բառը զորավոր հնչե ընթերցողի ականջին, ունիմ Պատմահոր գիրքերին:

Խորենացին կարգացող ամեն ուշիմ ընթերցողի ծանոթ է այն պաշտամունքի հասնող խորունկ ու զգայական նվիրումը, զոր Մովսես ուներ դեպի իր ուսուցիչը՝ Սահակ Պարթևը:

Երբ Մեսրոպի մահվան և թաղման մասին Խորենացին երկարորեն հիացիկ տողեր կնվիրե, կակնկալես, որ Սահակի մահվան պարագային Մովսեսի հեռուորական տաղանդը թևեր առնե և իր գովասանական ջահերը «կայծակնաճաճան» վառե: Այդ չըներ, բայց Գ գրքի 67-րդ գլխի մեջ կգրե. նրա (Սահակի) մասին պետք էր փառավոր ճառ գրել, դրվատել մեր սուրբ հորը, ինչպես նրան արժան է, բայց որպեսզի գլխի երկարությունը ընթերցողին ձանձրույթ չպատճառե, ուրիշ տեղի և ժամանակի կթողնենք այս բաները, այս գրքից դուրս:

Ուրիշ տեղի և ժամանակի: Ու այդ խոստումը կատարեց ...

Ողբի մեջ Սահակի մասին Խորենացիի գրած բաբախուն տողերը կարդալեդ վերջ, գիտես թե աններելի ապերախտություն պիտի ըլլար Խորեն-

⁵⁰ Այս, հավանաբար, պատճառ է դարձել, որ նրանք դարերի ընթացքում առանձին-առանձին ընթերցանվեն և անջատվեն մայր ժողովածուի որոշակի սկզբունքով ու տեսքով ներկայացված հատվածից և կորցնեն բուն Մատյանի բովանդակության տրամաբանությունը, իսկ իրենք դառնան թափառող միավորներ: Հետագայում այդ նույն ճակատագրին է արժանացել նաև Անանիա Շիրակացու «Քննիկոն» համայնագիտարանը, որն ամբարում էր քառյակ գիտությունները, Հայոց տոմարը և մատենագրական այլ նյութեր, որոնք բաժան-բաժան են, եղել և նրանցից մեզ են հասել բեկորներ, որպես առանձին միավորներ:

⁵¹ Թովմա Արծրունի, էջ 96:

առաջին դրքում» և «վերջին գրույցներում», իսկ Ն. Աղբալյանը՝ «մեր առաջին կոշված գրքի մեջ» և «վերջին խոսքերի մեջ»։ Նա գրում է. «Այսպես է. իմում թե «վերջին խոսք» ասելով հորենացին հասկանում է իր վերջին Գ գիրքը ... Եթե Բագրատունին հորենացու Պատմությունը մաս առ մաս առնելով կցում էր իրար, Պարսիկ առասպելների մասին գրությունը պետք է կցվեր Գ գրքին»⁵⁸։

Ինչպես տեսնում ենք իս. Մտեփանեն առաջինի մեջ տեսնում է Ա. Բ գրքերը (մեր առաջին գրքի մեջ), իսկ վերջինի մեջ՝ երրորդ գիրքը⁵⁹։ Մտ. Մալխասյանի կարծիքով առաջին գիրքը Հայոց Մեծաց Ծննդաբանությունն է, վերջինը՝ գրույցներ են։ Ն. Աղբալյանի կարծիքով առաջինը նույնպես առաջին գիրքն է, վերջինը՝ Գ գիրքը։ Գ. Տեր-Մկրտչյանը գրում է, որ բոլոր թարգմանիչները, բացի Ղ. Ալիշանից «յառաջինսն մեր ասացեալ գիրքս» — սխալ են թարգմանում, հաշվի չեն առնում «առաջինսն» բառի հոգնակի ձևը⁶⁰։

Ուրեմն այս հատվածը պետք է թարգմանել այսպես. «Այլ իմացիք մեր ատելությունը այսպիսի բանի հանդեպ, որ ոչ մեր առաջին կոշված գրքերի մեջ ե ոչ վերջին բաների մեջ արժանի համարեցինք շարել, այլ զատ և ուրիշ», ընդ որում «առաջին կոշված գրքեր» ասելով նկատի ունի առաջին երեք գրքերը, իսկ «վերջին բաները»՝ Վերադարձությունը։ Ի դեպ, առաջին երեք գրքերը նկատի ունի հորենացին նաև, երբ խոստանում է Սահակին դրվատել «արտաքոյ այսց գրոց»⁶¹, այսինքն՝ «այս գրքերից դուրս», որը դարձյալ եզակի է թարգմանված, չնայած ընկալվում է բոլոր երեք գրքերը միասին։ հորենացին իր Պատմագրքի առաջին երեք գրքերը միասին մի

58 Ն. Աղբալյան. Ամրոցական երկեր, հ. 4, Պատմություն հայ գրականության. Բնյուրթ, 1970, էջ 494—495։ Պատմիրատու Սահակ Բագրատունին իր առաջարկությունն, անհետացած առաջ այն իրականություն դառնալու հնարավորությունը պետք է տեսներ, որը հիրավի կարի Այդ Առաջին գիրքն էր, որտեղ խոսվում էր անդիր գրույցների, առասպելների մասին, իսկ հորենացին այդտեղ չի շարում պարսից առասպելները, քանի որ ատում է, որպես սուտապատում բաներ։ Այս տրամաբանությամբ հորենացին կարող էր Գ գիրքը համարել «վերջին բաներ» և նշել, որ այնտեղ չի շարում պարսից առասպելները, որովհետև չի սիրում։ Չէր կարող, որովհետև երրորդ գիրքը, ի տարբերություն առաջինի, ոչ մի կապ չունի առասպելների և անդիր գրույցների հետ։ Ընդհակառակը, Գ գիրքը մասամբ պատմիչի ժամանակակից պատմությունն է, առասպելներին անհարիր, «Աւարտաբանութիւն մերոց հայրենեաց» խորագրով, ընդգրկում է պատմական «անցքերը Սուրբ Տրդատից հետո մինչև Արշակունյաց ցեղի դադարելը թագավորությունից և Սուրբ Գրիգորի սերունդինը՝ քահանայապետությունից»։ Հատված, որի մասին հորենացին գրում է, որ այն պետք է ոչ թե «պերճաբանությունից» գրավելով, այլ մեր պատմածների ճշմարտության կարտեզով՝ հաճախակի և անզգար կարգան մեր հայրենիքի պատմությունը» (հորենացի, էջ 307)։ Ո՛չ Սահակ Բագրատունու, ո՛չ էլ Մովսես հորենացու մտքով անգամ չի անցել «վերջին բաների» տակ հասկանալ Հայոց պատմության Գ գիրքը։ Ուրեմն դրա տակ պետք է նկատի առնել մի գիրք, ուր, թերևս, կարելի էր շարել պարսից առասպելները։ Դա շորորոգ գիրքն էր։ Բայց այնուամենայնիվ, այստեղ էլ չի շարվել, Ինչու՞։ Որովհետև շորորոգ գիրքը հավելված էր, որը վերաբերում էր նախորդ գրքերին և թերևս կարելի էր առասպելների մասին նյութը մի տեղ խցկել։ Սակայն հենց այս հանգամանքն էլ խանգարում էր, որ այն մուծվեր հավելվածում, քանզի հավելվածը վերաբերում էր նախորդ գրքերի մեջ եղած նյութերին, իսկ դրանց մեջ պարսկական առասպելների մասին բան չկար, հետևաբար հավելվածում նրանք լինել չէին կարող։ Եվ նրանց մասին գրվածը մնաց որպես առանձին, ուրույն գործ։

59 Նույն կարծիքին է Գ. Տեր-Մկրտչյանը. տե՛ս նշվ. աշխ., էջ 55—56։

60 Նույն առիթով, հորենացու Հայոց պատմության Ամստերդամի հրատարակության մեջ. «Ի գիրքս» է. «Զի ոչ յառաջինսն մեր ասացեալ ի գիրքս և ոչ վերջին բանս...» (1695. թ., էջ 105)։ Նույն է 1736 թ. լոնդոնյան (էջ 78) և 1752 թ. վենետիկյան (էջ 93) հրատարակություններում։

61 Մովսես և իս. հորենացի. Պատմութիւն հայոց, 1981, էջ 442։

գիրք դիտելու ավելի պերճախոս վկայություն ունի, որ հարցը քննողների ուշադրությունից դուրս է մնացել: Այդ հորենացու Պատմության խորագիրն է, որին հանդիպում ենք հնագույն օրինակներում, և որը պահպանված է պատմագրի գիտահամեմատական հրատարակության սկզբում: Ահա այն. «Հայոց պատմութիւն յերիս հատածս, ասացեալ Մովսէսի հորենացույ, ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ»⁶²: Այդպես է նաև Մատյանիս Ներսես Լամբրոնացուն պատկանած օրինակից 1671 թ. կատարված ընդօրինակության մեջ⁶³:

Հայոց պատմության խորագրում «յերիս հատածս» հորենացու «առաջին կոչված գրքերն» են, Թովմա Արծրունու մոտ հիշատակված «երեցունց դրուագեալ հատուածին», Հայոց պատմության առաջին երեք գրքերի միագումարությունը, «ի վերայ որոյ» գրված է հավելվածը կամ «վերադարձությունը, որը հորենացին անվանում է «վերջին բանս»: Ինչպես տեսանք «վերջին բանս» թարգմանել են «վերջաբանություն», «գրույցներ», «խոսքեր»: Իհարկե բոլորն էլ ճիշտ են: Բայց մեր կարծիքով, այն պետք է պահել, ինչպես որ կա. «բան»: հորենացին երկրորդ գրքում «բան» գործածել է խորագրից առաջ. «Բան միշակ պատմութեան մերոցն նախնեաց»: Ամենայն հավանականությամբ այն առանձին երկերը, որոնք զետեղվել են «վերադարձություն» մեջ կամ շորորոդ դրվագում, իրարից անջատվել են ոչ միայն խորագրերով, այլև «Բան Ա», «Բան Բ» և այլն կարգավորությամբ: Եվ հորենացին «ի վերջին բանս» ասելով հենց այդ է նկատի ունեցել: Ուրեմն «վերջին բաների մեջ» չի զետեղել Պարսից առասպելները: Դրանք այժմ գտնվում են Ա և Բ գրքերի մեջտեղում, ուր ամենայն հավանականությամբ զետեղել է պատվիրատուն:

«Վերջին բանս» բառերը միաժամանակ ցույց են տալիս, որ վերադարձությունը եղել է առանձին նյութերից կազմված հատված և ոչ նախորդ գրքերի նման միահար շարադրություն: Թովմա Արծրունին հավատարիմ է Մովսես հորենացու «Հայոց Մեծաց պատմությանը» նաև այստեղ, որի վկայված «երեցունց դրուագեալ հատուածը» և ի վերա նորա «վերադարձությունը» նույնանում են հորենացու «յառաջինսն մեր ասացեալ գիրս, և «վերջին բանս» բաժանումների հետ:

հորենացու Պատմության շղթան միահար շարադրությամբ սկզբից անցնում է մինչև երրորդ հատվածի վերջը և ավարտվում է Ողբով, որպես մի ամբողջություն: Չորրորդ դրվագը սրանից դուրս է, բայց նրա նյութը վերաբերում է երեք գրքերին, ուրեմն սրանց կից է, այսինքն՝ չորրորդ դրվագը նույնպես Պատմության մասն է, որը Թովմա Արծրունու մոտ կոչվում է «չորրորդ դպրութիւն» (էջ 18), «երկրորդ պատմագրութիւն» (էջ 96) և զանազան ենթադրությունների առիթ է տվել:

Մովսես հորենացու Հայոց պատմության Լամբրոնացու օրինակը ցույց է տալիս, որ հորենացին ինքն էլ իր առանձին միավորների (բնագրերի ու ցանկերի) վերնադրերն ու ավարտագրերը նշանակելիս ազատ է վարվել:

Բերում ենք ցանկերի և գրքերի խորագրերը Լամբրոնացու օրինակի ընդօրինակությունից (ՄՄ, ձեռ. № 10 000).

Յ ա ն կ ե Ր

Չա Հայոց պատմութիւն
երիս հատածս, ասացեալ
Մովսէսի հորենացույ, ի
խնդրոյ Սահակայ Բագ-
րատունւոյ

Գ Ր Բ Ե Ր

Հայոց Պատմութիւն երիս
հատածս, ասացեալ Մով-
սէսի հորենացույ
ի խնդրոյ Սահակայ Բագ-
րատունւոյ՝ Ծննդաբանու-

⁶² Մովսէս հորենացի. Պատմութիւն Հայոց. Տփլիս, 1913, էջ 1:

⁶³ ՄՄ, ձեռ. № 10 000, էջ 2 ա:

Ցանկը Առաջին (դպրութեան)	Թիւն Հայոց Մեծաց,
3ա Կատարեցան ցանկաբ դպրութեան Մենդարանու- թեան Հայոց Մեծաց	48բ Կատարեցան գիրք առա- ջին Մենդարանութեան Հայոց Մեծաց:
51բ Ցանկը երկրորդ գրոց Մի- ջակ պատմութեան Հայոց	56ա Մովսեսի Խորենացույ Բան Միջակ պատմութեան Մերոցն նախնեաց: Հատած երկրորդ:
55ա Բաւանգակեցան գիրք երկրորդ Յառաջադիմութեան Հա- յոց Մեծաց:	141բ Բովանդակեցան գիրք երկրորդ Յառաջադիմութեան Հա- յոց Մեծաց
142ա Ցանկը երրորդ հատածի Աւարտումն Պատմութեան Հայոց Մեծաց	145ա Մովսէսի Խորենացույ Աւարտաբանութիւն մերոց Հայրենեաց:
144բ Աւարտեցան ցանկը եր- րորդ գրոց յանկ ելանե- լոյ Պատմութիւն Հայոց:	213ա Հատած երրորդ Աւարտեցան գիրք եր- րորդ յանկ ելանելոյ Պատ- մութիւն Հայոց Մեծաց Մովսէսի Խորենացույ Վերադարձութիւն ի վերայ երեցունց դրուա- գեալ հատուածին Դրուագ շորորդ

(Թովմա Արծրունու վկա-
յությամբ շորորդ դպրու-
թիւնը կամ երկրորդ
պատմագրութիւնը ունի
այսպիսի խորագիր)

Ինչ է տալիս խորենացիադիտութեանը ներկայացված համեմատական ցանկը՝ կազմված Ներսես Լամբրոնացու օրինակի հիման վրա: Եթե խորագրի թերիս հատածն արտահայտությունը հայտնի լիներ Խորենացու Հայոց պատմության շորորդ գրքի գոյություն հարցն ուսումնասիրողներին, նրանք ոչ թե կժխտեին և Թովմա Արծրունու վկայությունը կբամահրեին, այլ կընդունեին և կաշխատեին վերականգնել թանկագին կորուստը:

Զէին վիճի նաև «դրուագ» բառի շուրջ, այն «գլուխ» համարելով և նրա մեջ «գիրք» շտեմանելով: Ինչպես երևում է ցանկից, Խորենացին իր պատմութեան երեք հատածները կոչել է «Առաջին դպրութիւն», «Երկրորդ գիրք», «Երրորդ հատած» խորագրերից հետո, իսկ բոլորը՝ գիրք՝ ավարտագրերում, և հավելածի խորագրից հետո՝ «Դրուագ շորորդ»: Բոլոր գրքերի խորագրում պահպանված է հեղինակի՝ «Մովսէսի Խորենացույ» անունը: Առաջին գրքում անունը բացակայում է, քանի որ նրան նախորդած Պատմագրքի ընդհանուր խորագրում արդեն հիշատակված է: Այն պահանջել է նաև շորորդ գրքի խորագրում: Ինչպես հատածների հերթակարգման ժամանակ տարբեր անուններով է կոչում միավորները (դպրութիւն, գիրք, հատած, դրուագ), անպես էլ տարբեր բառերով է անվանում ավարտագրերը՝ «Կատարեցան գիրք», «Բաւանգակեցան գիրք», «Աւարտեցան գիրք»: Չորրորդ գրքի ավարտագիրը անհայտ է: Չորրորդ գրքի մասին Թովմա Արծրունու վկայությունը քաղված է Խորենացու «Հայոց Մեծաց պատմության շորորդ գրքի խորագրից, որն իր կառուցվածքով ներդաշն է մյուսներին:

Մովսես Խորենացու Պատմագրքի խորագիրը եղել է «Պատմութիւն Հայոց Մեծաց»: Լամբրոնացու օրինակում «Հայոց Պատմութիւն» ձևը, հավանաբար Լամբրոնացին է խմբագրել, որպեսզի «Մեծ Հայքի պատմության» փոխարեն, որի մեջ Կիլիկիան չէր մտնում, ընդհանուր Հայոց Պատմությամբ

սկիզբ ընկալվի: Այլապես ինչու են նշվում «Մենդարանութին Հայոց Մեծաց», «Յառաջադիմութին Հայոց Մեծաց», «Աւարտումն պատմութեան Հայոց Մեծաց» խորագրերը՝ ցանկերում և բնագրերում: Վերջապես՝ Թովմա Արծրունու վկայությունը՝ «Պատմութին Հայոց Մեծաց», սրա նմանությամբ՝ «Տոմար Հայոց Մեծաց» և այլն:

Հիմք ընդունելով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ տարբեր հարցերին անդրադառնալու խոստովանությունները և շորրորդ գրքի մասին որոշակի վկայությունը, ինչպես նաև Թովմա Արծրունու ցուցումները՝ շորրորդ գրքից, կասկած չի մնում, որ «Հայոց պատմության» շորրորդ գիրքը գոյություն է ունեցել որպես հավելված նախորդ գրքերի: Այն աղբյուրների համավաճաբար կամ ամբողջական համադրությամբ կազմած ժողովածու էր, մի տեսակ ջրաստմափա-ոսկեփորիկ «ի մեղալ երեցունց դրուագեալ հաւառածին»: Ուստի հնարավոր է Մովսես Խորենացու խոստովանությունների և Թովմա Արծրունու շորրորդ գրքից քաղված ցուցումներների հիման վրա մոտավորապես վերականգնել Մովսես Խորենացու «Վերադարձութինը» կամ «Երկրորդ պատմագրությունը», որը և կաաարված է:

ВПРОС О ЧЕТВЕРТОЙ КНИГЕ «ИСТОРИИ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ

А. С. МАТЕВОСЯН

Резюме

Сто сорок лет тому назад Гевонд Алишан, опираясь на свидетельства Товмы Арцруни, а также признаниях, содержащихся в «Истории Армении» Мовсеса Хоренаци, писал, что имелась еще одна часть, озаглавленная «Возвращение к трем или к третьей части, т. е. дополнение (приложение) к трем книгам, которое считалось «четвертой частью». Алишан также опубликовал отрывок из этой книги. Такого же мнения, с некоторыми различиями относительно содержания книги, придерживались Б. Чугурянц, Валаршанатский, Норайр Бюзандац и Армен. Г. Тер-Мкртчян и Ст. Малхасянц безоговорочно отрицали наличие четвертой книги. Этим исследователям было доступно лишь печатное издание, с одной непростительной опечаткой. Анализ хранящейся в Матенадаране древнейшей рукописи «История дома Арцруни» Товмы Арцруни (1303 г.) даст еще одно свидетельство существования четвертой книги «Истории Армении» Мовсеса Хоренаци.